

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունված է
12 նոյեմբերի 2012 թ.

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ և 6-րդ մասերով.

«5. 2013 թվականին պահանջն առաջանալու դեպքում միջին ամսական աշխատավարձ հաշվարկելիս աշխատողի տվյալ ամսվա աշխատավարձի չափին ավելացվում է սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով որոշվող մեծությունը, եթե տվյալ ամիսը 2012 թվականի ամիս է:

6. Սույն օրենսգրքի 195-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված մեծությունը որոշվում է՝

- 1) մինչև 20 000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 7 000 դրամ.
- 2) 20 000 դրամից մինչև 100 000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 7 000 դրամ՝ գումարած 20 000 դրամը գերազանցող գումարի 15 տոկոսը.
- 3) 100 000 դրամից ավելի աշխատավարձի դեպքում՝ 19 000 դրամ՝ գումարած 100 000 դրամը գերազանցող գումարի 5 տոկոսը:»:

Հոդված 2. Սույն օրենքը համարվում է ժամանակավոր նորմատիվ իրավական ակտ, և դրանով կատարված լրացումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից և գործելու է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան